



ՏԵՏՐԱԿ
ԳՈՎԱՍԱՆԱՑ

Ի ՎԵՐԱՅ ՏՆՈՐԻՆԱԿԱՆ
ՈՒՐԲ ՈՒԽՏԱՏԵՂԵԱՑՆ ՔՐԻՍՏՈՍԻ



ՏՊԱՐԱՆԻ ԱՌԱՋԵԼԱԿԱՆ Ս. ԱԹՈՈՈՈՅ
ԱՐՔՈՅ ՉՈՎՈՎԱՐԵԱՆ ԱՆ
ՏԵՐՈՒՍԱԴԵՄ

—
1906



ՏԵՏՐԱԿ ԳՈՎԱՍԱՆԱՑ

Ի ՎԵՐԱՅ ՀԱՄՈՒՔԵՆ ՏՆՈՐԻՆԱԿԱՆ
ՍՈՒՐԲ ՈՒԽՏԱՏԵՂԵԱՑ

ՈՐՔ ԵՆ ՅԱՍՏՈՒԱԾԱՀՐԱՇ ՔԱՂԱՔԻ
ՍՈՒՐԲ ԵՐՈՒՍԱՂԵՄ

Ի ԽՆԴՐՈՅ ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԵՒ ԶԵՐՄԵՌԱՆԴ
ՈՒԽՏԱՏՈՐԱՑ




Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ա. ԱԹՈՌՈՅ
ՄՐԳՈՅ ՅԱԿՈՎԱՔԵԱՆՑ
ԵՐՈՒՍԱՂԵՄ

1906

**Կցեսցի չեզու իմ ի քիմս իմ , թէ ոչ յիշեցին
զքեզ , թէ ոչ նախ նուազեցից զքեզ , Երբ' ևսաղէմ ,
ակիզըն ուրախութեան իմոյ . Սալմ . ձԼԶ . 6 .**

1



ՏԱՂ ԳՈՎԱՍԱՆԱՑ

Ի ՎԵՐԱՅ ՍՐՅՈՅ ՔԱՂԱՔԻՆ
ԵՐՈՒՍՈՂԵՄԻ

Ի ՅՈՐԴՈՐՈՒՄՆ ՈԽԻՏԱՓԱՓԱԴ ՀԱԽԱՏԱՅԵԼՈՅ

ԵՐԳ ԱՌԱՋԻՆ

ՊԵՄՆԵ քաղաք ծավուն մօտիկ ,
Երուսաղէմ խիստ գեղեցիկ
Անմահութեան բուրէ հոտիկ .
Եկայք ՚ի սուրբ Երուսաղէմ .

Երուսաղէմ է ծաղիեալ դաշտ ,
Յորում բնակին շատ իաշապաշտք .
Տէր մեր Քրիստոս ընդ մեզ է հաշտ .
Եկայք ՚ի սուրբ Երուսաղէմ .

Երուսաղէմ է սուրբ քաղաք ,
Յամեն օր գոյ անդ Պատարագ ,
Որոյ շնորհն է մշտածագ .
Եկայք ՚ի սուրբ Երուսաղէմ .

Երուսաղէմ յոյժ փառաւոր .
Յուխտ եկողաց գանձ հոգեւոր
Մահտեսութեան անուն տայ նոր .
Եկայք ՚ի սուրբ Երուսաղէմ .

Երուսաղեմ վեց դուռ ունի ,
 Սըտանողաց մեծ շնորհ ունի .
 Զի քաղաք Տեսոն անուանի .
 Եկայք ՚ի սուրբ Երուսաղեմ :
Սուրբ Փրկիչն է բանտ Քրիստոսի ,
 Հրեշտակապետն ՚ի նոյն կարգի :
 Սուրբ Յակովը է վանք պանծալի .
 Եկայք ՚ի սուրբ Երուսաղեմ :
Յորդանան գետ մկրտութեան ,
 Սուրբ Վերնատունն հազորդութեան ,
 Սուրբ Գողգոթայն խաչելութեան .
 Եկայք ՚ի սուրբ Երուսաղեմ :
Սուրբ Յարութիւն է բարձրաշեն ,
 Յօրինուածն է գեղեցկօրէն ,
 Բաղձան դիմել աշխարհ ամեն .
 Եկայք ՚ի սուրբ Երուսաղեմ :
Սուրբ Յակովը է բարձր շինած ,
 Աւագ խորանն սակեջըրած ,
 Պօղոս Պետրոս վըրան դրած ,
 Սուրբ Գլուխդիրն յինքն է թաղած :
Գլուխդիրն դուռն յորժամ բանան ,
 Անդ մերձակայք փղձկին և լան ,
 Հոգւով յնձան ու բախանան .
 Եկայք ՚ի սուրբ Երուսաղեմ :
Ծունդ եղեալ զայն համբուրեն ,
 Եւ խնդրուածք բազում առնեն ,
 Յորդ արտասուօք զոգիս մաքրեն .
 Եկայք ՚ի սուրբ Երուսաղեմ :

Սուրբ Յակովըն է զարմանալի ,
 Արեգական նման փայլի ,
 Պարգեւ տուեալ Հայոց ազգի .
 Եկայք ՚ի սուրբ Երուսաղէմ :

Սուրբ Յակովըն է բազմասեղան ,
 Վարդապետաց հանդիսարան ,
 Քսան եւ հինգ ունի խորան .
 Եկայք ՚ի սուրբ Երուսաղէմ :

Սուրբ Վերնատունն երբ ոք հայի
 Սուրբ Նշանէն անդ զարհուրի ,
 Յանոյշ հոտոյն յոյժ զմայլի .
 Եկայք ՚ի սուրբ Երուսաղէմ :

Սուրբ Յակովըն է գանձ բարելի ,
 Բոլորն ամեն Եկեղեցի ,
 Ուխտաւորաց Ուխտատեղի .
 Եկայք ՚ի սուրբ Երուսաղէմ :

Էջմիածինն յետոյ շինած ,
 Սուրբ Այնա նոր խորան օծած
 Ի վերայ սուրբ երից վիմաց .
 Եկայք ՚ի սուրբ Երուսաղէմ :

Սորոգ շինեալ կանանց տեղի ,
 Որ Վերնատուն անուամբ կոչի .
 Երկու խորանք կան յայն վայրի ,
 Ուր Պատարագ մատուցանի :

Յընթրեաց խորանն ՚ի հինգ շաբթի՝
 Յաւագ աւուրս սուրբ շաբթի .
 Եւ ՚ի միւսում սուրբ խորանի
 ՚ի սուրբ տօնին Վարդավառի :

Ի սէր քո՞սուրբ օրհնեալ Գլխին
 Երկու արքայք սիրով վառին՝
 Մեծըն Տըրդատ եւ Կոստանդին
 Սուրբ Հաւատով առ քեզ եկին։
Քրիստոս Աստուած Տէրն ամենին
 Ոշորմելով գործոյս ձեռին,
 Լսել տացէ ինձ ծառային՝
 «Եկո օրհնեալ ձայնն Աստուածային։
Որ մեղաւոր եմ հողածին,
 Դու ես իմ յոյս, Աստուածածին,
 Բարեխօսեա առ Միածին
 Յիսուս որդիդ յաւուր մեծին։

ԵՐԳ ԵՐԿՐՈՐԴ

Ասացեալ բարառնաբար ՚ի վերայ փրկագործ
 Զարչարանազ տեղեացն Քրիստոսի։

Ի սուրբ երկիրն այն Աւետեաց
 Ժաման հստեալ Ուխտաւորաց,
 Հարցաք զնա ուրախազգեաց
 Ուր է քաղաքն աննման,
 Ուր է, ուր է յորում էր մեր
 Արքայն օծեալ։
 Զայնէր ձոյնէր՝ զի՞ է, զի՞ է.
 Եկայք տեսէք դուք զայն, օրհնեալք։
Պարեալ հոգւով անդ ցնծացաք,
 Մարմնով զուարթուն ՚ի սէր անկաք,

Երբ ՚ի սուրբ լեառն այն հասար .
Ո՞ւր է տեղին բարձրացուցման ;
Ո՞ւր է , ո՞ւր է յորս կայր մեր՝ կեանք
Անդէն կախեալ .

Զայնէր ձայնէր՝ զի՞ է , զի՞ է .
Եկայք տեսէք դուք զայն , օրհնեալք .

Օրհնաբանեալ զմեր Արարիչ
Ըզպարգեւացըն ընձեռիչ ,
Երբ հայեցաբ զայն կառափիչ .
Ո՞ւր է սուրբ լեառն Գողգոթայն ,
Ո՞ւր է , ո՞ւր է յորում Յիսուս
կայր տարածեալ .

Զայնէր ձայնէր՝ զի՞ է , զի՞ է .
Եկայք տեսէք դուք զայն , օրհնեալք .

Ղեկաբեկաւ սրտի մեր նաւ
Յահէ փառաց նորին տնբաւ ,
Ուր խնդիր մեր յառաջ եդաւ .
Ո՞ւր է վէմն այն պատուման ,
Ո՞ւր է , ո՞ւր է յոր կայր անմեղ
գառըն զենեալ .

Զայնէր ձայնէր՝ զի՞ է , զի՞ է .
Եկայք տեսէք դուք զայն , օրհնեալք .

Որդւոց մարդկան սակըս մեղաց
Ի խաչ ել անդ Տէրն փառաց ,
Զայն վայր հարցաբ արիւնամած՝
Ո՞ւր է տեղին կողին խոցման ,
Ո՞ւր է , ո՞ւր է յորում ջուր եւ
Արիւն բղխեալ .

Զայնէր ձայնէր՝ զի՞ է , զի՞ է .

Եկայք տեսէք դուք զայն , օրհնեալք :

Ապրաւիելիդ 'ի Հըեշտակաց

Բարեբանեալ համայն յազանց ,

Զքեզ ազաշեմք , ով Տէր գլթած ,

Ուր է լեզին այն դառնութեան .

Ուր է , ուր է զոր ընկալար

Դու ծարաւեալ :

Զայնէր ձայնէր՝ զի՞ է , զի՞ է .

Եկայք տեսէք դուք զայն , օրհնեալք :

Վայ եւ եղուկ մերոց անձանց

Զի մատնեցաք բղքեզ մեզաց ,

Արդ ոչ ցաւեալ կրկին հարցաք ,

Ո՞ր այլ ցաւոցդ քո նման .

Ուր է , ուր է զոր կրեցեր

Դու խոնարհեալ :

Զայնէր ձայնէր՝ զի՞ է , զի՞ է .

Եկայք տեսէք դուք զայն , օրհնեալք :

Արդարութեան է նա աղբիւր ,

Դատապարտեալ կամաւըն իւր .

Զարչարանօք որ անդ տանջիւր ,

Ուր է արիւնն սուրբ ոռոգման .

Ուր է , ուր է սուրբ գլուխ փշօք

Իւր պատկեալ :

Զայնէր ձայնէր՝ զի՞ է , զի՞ է .

Եկայք տեսէք դուք զայն , օրհնեալք :

Ռամից ստեղծողըն դու էից

Հարեալ յեղեգըն յօժ ձաղից ,

Որով հայցեմք զմուտ ելից ,
Ո՞ւր է տեղին զքեզ կատակման ,
Ո՞ւր է , ո՞ւր է յորս գանեցար
Անդ հայհոյեալ :

Զայնէր ձայնէր՝ զի՞ է , զի՞ է .

Եկայք տեսէք դուք զայն , օրհնեալք :

Դատեալ որպէս նա պարտաւոր՝
Բառնայր՚ի յուս զփայտ տհաւոր ,
Ի բանտ մահու լեալ ուղեւոր .
Ո՞ւր է տեղին այն արդելման ,
Ո՞ւր է , ո՞ւր է յոր զԱղամայն
Զպարտս քաւեալ :

Զայնէր ձայնէր՝ զի՞ է , զի՞ է .

Եկայք տեսէք դուք զայն , օրհնեալք :

Անապական իւր սուրբ մարմնով
Յոյժ վշտագնիւր նա տագնապով ,
Կրկին ըզիսաչ բառնայր ուսով ,
Ո՞ւր է տեղին այն գլորման .
Ո՞ւր է , ո՞ւր է յոր կայր Փրկիչ
Անդ մերկացեալ :

Զայնէր ձայնէր՝ զի՞ է , զի՞ է .

Եկայք տեսէք դուք զայն , օրհնեալք :

Պարտաւորեալ հանդէպ խաչ
Երես անկեալ կամք առաջի ,
Եւ հարցանեմք զլոյսդ կենդանի .
Ո՞ւր է մուրհակ այն պատառման
Ո՞ւր է , ո՞ւր է զօր ջնջեցեր
Արեամք որբեալ :

Զայնէր ձայնէր՝ զի՞ է , զի՞ է .

Եկայք տեսէք դուք զայն , օրհնեալք .

Երբ հաւանեալ նա պատեցաւ

Ի Յովսեփայ փառօք բարձաւ

Գանձըն կենաց անդ զմռեցաւ ,

Ուր է տեղին այն պատանման .

Ուր է , ուր է յոր զծածկոյթ

Հետյն էր զգեցեալ :

Զայնէր ձայնէր՝ զի՞ է , զի՞ է .

Եկայք տեսէք դուք զայն , օրհնեալք .

Տարեալ եդաւ ՚ի Գերեզման ,

Ի զինուորաց թողեալ պահպան ,

Ծածկեալ ՚ի սիրու երկրի միժան ,

Ուր է տեղին այն սուրբ թաղման ,

Ուր է , ուր է յորում էր դանձն

Անմահացեալ :

Զայնէր ձայնէր՝ զի՞ է , զի՞ է .

Եկայք տեսէք դուք զայն , օրհնեալք .

Էն որ յաշեաւ չքեղ փառօք՝

Յարոյց զբնութիւնըս իւր սարօք .

Լցոց զմեզ իւր պարգեւօք .

Ուր է տեղին սուրբ Յարութեան ,

Ուր է , ուր է յոր կայր Նրեշտակ

Զինջ լուսափայլ .

Զայնէր ձայնէր՝ զի՞ է , զի՞ է .

Եկայք տեսէք դուք զայն . օրհնեալք .



ԵՐԳ ԵՐԻՈՐԴ

Ի վերայ սրբոյ Երաւանադիմի և, այլ սուրբ Տեղեաց*

Ի սէր հարեալ Աստօւածակոխ

սուրբ քաղաքին ցանկալի ,

Յար եւ յաւէտ կարօտութեամբ
անձն իմ հիւծի միշտ հալի .

Նորին տեսոյն սիրտ իմ բաղձմամբ
աչս արտասուօք լցեալ լի .

Դէպ ՚ի յերկիրն սուրբ Աւետեաց
առներ տաներ հովն զիս ,

Դէպ ՚ի սուրբ վայրսըն փրկական
փչէր տաներ հովն զիս՝ հովն զիս .

Նորին սիրոյն եւ տեղենենէն

չկարացի ես յագիլ ,

Ի հեռանալս եւս առաւել
ունիմ կարի բորբոքիլ ,

Յոր վայր նստիմ ուր եւ իցեմ
չունիմ երբէք դադարիլ .

Դէպ ՚ի քաղաքն աստօւածակոխ
առներ տաներ հովն զիս ,

Դէպ ՚ի սուրբ վայրսըն փրկական
փչէր տաներ հովն զիս՝ հովն զիս .

Օդաթռիչ թեւըս տայր ինձ

ամենազօք Փրկիչն իմ ,

Որ սլացեալ հասանէի

՚ի սուրբ Տեղիսն ըղձագին .

Կրկին դիպեալ սուրբ վայելմանց
 լինէի ես ինդագին .
 Դէալ 'ի յերկիրն սուրբ Աւետեաց
 առնէր տանէր հովն զիս ,
 Դէալ 'ի սուրբ վայրուըն փրկական
 փշէր տանէր հովն զիս՝ հովն զիս .
Տապիմ տենչմամբ մեծ Տաճարին
 սուրբ Յարութեան մեր Փրկչին ,
 Ուր կան տեղիք չնորհածիր ,
 Գերեզման Տեառն արարչին .
 Ժամերգողաց երգ քաղցրաձայն
 միշտ յունկո իմ առ հնչին .
 Դէալ 'ի Տաճարն սուրբ Յարութեան
 առնէր տանէր հովն զիս ,
 Դէալ 'ի սուրբ վայրուըն փրկական
 փշէր տանէր հովն զիս՝ հովն զիս .

Անձկացեալ եմ այն Սրբազն
 Տեղոյն՝ որ կայ 'ի յԱյրին ,
 Ուր Տէրն մեր Ծնեալ եղաւ
 'ի լուսափայլ սուրբ Մորին ,
 Դասը Հըշտակաց անդ պար առեալ
 օրհնաբանիչ միշտ լինին .
 Դէալ 'ի սուրբ վանսըն Ծննդեան
 առնէր տանէր հովն զիս ,
 Դէալ 'ի սուրբ վայրուըն փրկական
 փշէր տանէր հովն զիս՝ հովն զիս .
Պատեալ ըղձիւ միշտ փափագիմ
 Ամենահրաշ տաճարին ,

Ա. Ա. Ն. օր Հ. Ն. ե. ա. լ. մ. օր Տ. ե. ա. ռ. ն. ի. մ. ոյ
գ. ե. ր. ա. մ. ա. ք. ու. ր. ս. ո. ւ. ր. բ. Շ. ի. ր. մ. ի. ն.

Ու. ր. Ս. ե. ր. ո. վ. է. ք. ե. ւ. Ք. ե. ր. ո. վ. է. ք.
ա. ն. տ. ե. ս. ա. ր. ա. ր. գ. ո. ւ. մ. ա. ր. ի. ն.

Դ. է. պ. 'ի տ. ա. պ. ա. ն. ս. ո. ւ. ր. բ. Տ. ի. ր. ա. մ. օ. ր. ն.
ա. ռ. ն. է. ր. տ. ա. ն. է. ր. հ. ո. վ. ն. զ. ի. ս.,

Դ. է. պ. 'ի ս. ո. ւ. ր. բ. վ. ա. յ. ր. ս. ը. ն. փ. ր. կ. ա. կ. ա. ն.
փ. չ. է. ր. ա. ա. ն. է. ր. հ. ո. վ. ն. զ. ի. ս.՝ հ. ո. վ. ն. զ. ի. ս. :

Ե. ռ. ա. ն. դ. ա. գ. ի. ն. ե. մ. կ. ա. ր. օ. տ. ի. ւ.

ս. ո. ւ. ր. բ. Յ. ա. կ. ո. վ. բ. ե. ա. ն. ց. մ. ե. ծ. գ. ա. հ. ի. ն.,
Ո. ւ. ր. կ. ա. յ. տ. ա. պ. ա. ն. Տ. ե. ա. ռ. ն. ե. ղ. թ. օ. ր

ն. ե. ր. ք. յ. Ա. ւ. ա. գ. ս. ե. ղ. ա. ն. ի. ն.,
Ա. յ. լ. ե. ւ. ո. ր. դ. ւ. ո. յ. ն. Զ. ե. ր. ե. դ. ե. ա. յ.

Գ. լ. լ. ս. ա. դ. ի. ի. ն. ա. յ. ն. ց. ա. ն. կ. տ. լ. ի. ն.,
Դ. է. պ. 'ի յ. Ա. լ. թ. ո. ո. ն. ս. ո. ւ. ր. բ. Յ. ա. կ. ո. վ. բ. ե. ա. ն. ց

ա. ռ. ն. է. ր. տ. ա. ն. է. ր. հ. ո. վ. ն. զ. ի. ս.,
Դ. է. պ. 'ի ս. ո. ւ. ր. բ. վ. ա. յ. ր. ս. ը. ն. փ. ր. կ. ա. կ. ա. ն.

փ. չ. է. ր. տ. ա. ն. է. ր. հ. ո. վ. ն. զ. ի. ս.՝ հ. ո. վ. ն. զ. ի. ս. :

Ս. ի. ր. ո. վ. մ. ե. ծ. ա. ւ. հ. ե. ռ. ո. ւ. ս. տ. ա. ս. տ. ի.

ծ. ո. ւ. ն. ր. ե. ւ. հ. ա. մ. բ. օ. յ. ր. ա. ր. դ. ձ. օ. ն. ե. մ.,
Շ. ն. ո. ր. հ. ա. բ. ա. շ. և. ք. ա. ր. ա. ն. ց. հ. ո. ղ. ո. յ. ն.

Լ. զ. դ. է. մ. ս. ի. մ. ա. ռ. փ. ա. ր. ե. մ.,
(Ա. ռ. մ. ե. ծ.) թ. ո. ւ. ո. յ. ս. կ. ա. ր. օ. տ. ա. կ. ի. ր.

Հ. ե. ն. ն. է. ս. զ. ե. ր. գ. ս. յ. ա. ր. մ. ա. ր. ե. մ.,
Դ. է. պ. 'ի ք. ա. ղ. ա. ք. ն. ա. ս. տ. ո. ւ. ա. ծ. ա. կ. ո. խ.

ա. ռ. ն. է. ր. տ. ա. ն. է. ր. հ. ո. վ. ն. զ. ի. ս.,
Դ. է. պ. 'ի ս. ո. ւ. ր. բ. վ. ա. յ. ր. ս. ը. ն. փ. ր. կ. ա. կ. ա. ն.

փ. չ. է. ր. տ. ա. ն. է. ր. հ. ո. վ. ն. զ. ի. ս.՝ հ. ո. վ. ն. զ. ի. ս. :

ԵՐԳ. ԶՈՐՅՈՒՐԴ

Գովասանութիւնն ՚ի վերայ սրբոյ Երտասաղեմի :

ՅԱՍՏՈՒԾՈՅ ՀԻՆԵալ Քաղաք պատուական ,
Յանկալի զուարիժնոց եւ որդւոց մարդկան .
Զ.ՔԵՂ ՚ՆՈՐՈԳԵԱԾ Դաւիժմ մեծ արքայն ,
Սուրբ Երուսաղէմ , Քաղաք պատուական :

ԱՆՄԱՀ արքային դու ես բնակարան ,
Որդւոյն Աստուծոյ վայր տնօրէնութեան .
Ազինք ամենայն գոլ առ ՔԵՂ ցանկան ,
Սուրբ Երուսաղէմ , Քաղաք աննման :

Կամարին երկնից ես հանգունական ,
Առ դիրս աստեղաց ՚ի հաստատութեան ,
Ընդ կենդանակերպորն երկոտասան ,
Սուրբ Երուսաղէմ , Քաղաք պատուական :

ՈՐԴՎՈՅՆ ՅԱԿՈՎԵԱՅ ՄՈՒԱՐ ՍԵՓԻՀԱԿԱՆ ,
Վիճակաւ անկար տոհմին Յուդայեան .

ՔԵՂ ՀԻՆԵԱԾ ՄԱՃԱՐ ՍՈՂՈՄՈՆ ԱՐՔԱՅՆ ,
ՍՈՒՐԲ ԵՐՈՒՍԱՂԷՄ , ՔԱՂԱՔ ԱՆՆՄԱՆ :


ԲՈՒՐԵ միշտ ՚ի քէն հոտ անմահութեան ,
Վարդի շուշանի խնկոց զանազան .

ԿԱՄ ազնիւ իւզոց նարդից բալասան ,
ՍՈՒՐԲ ԵՐՈՒՍԱՂԷՄ , ՔԱՂԱՔ ՊԱՏՈՒԱԿԱՆ :

ՔԱՂԱՔ ԵՍ ԴՈւ մեծ թագաւորական ,
Ի ՔԵՂ կառուցաւ նոր Սողոմոնեան ,

Ա.ՀԱՅՐՀԱՄԱՄԱՏՐԱՆ ՄԱՃԱՐ ՅԱՐՈՒԹԵԱՆ ,
ՍՈՒՐԲ ԵՐՈՒՍԱՂԷՄ , ՔԱՂԱՔ ԱՆՆՄԱՆ :

Աղքիւր Սելովամ ջուր անմահութեան՝
 Բշխեալ զովարար ծարաւ բնութեան .
 Դու մեղ նոր Ոիսն քրիստոնէութեան .
 Սուրբ Երուսաղէմ, քաղաք պատուական .
 Ածեցաւ ՚ի քեզ Տէրըն վերնական ,
 Վէմ ընտիր եդեալ ՚ի գրլուխ անկեան .
 Զի ինքըն Քրիստոս ՚ի քեզ յարաժամ ,
 Սուրբ Երուսաղէմ, քաղաք աննման .
 Աստ եղեւ հոգւոյ փրկութիւն մարդկան ,
 Որ եւ խեկ ՚ի խաչ Տէր ՚ի Գողգոթայն .
 Յանցանքն Ադամոց Եւայի թողան .
 Սուրբ Երուսաղէմ, քաղաք պատուական .
 Եոր երկնելք յերկրի հրաշափառական ,
 Դու նոր արեւելք նոր արեգական .
 Նորոգեալ ցնծան դասք քրիստոսական ,
 Սուրբ Երուսաղէմ, քաղաք աննման .
 Հո քեզ գանձ բազում հոգեւորական ,
 Որով լիանան աշխարհ ամենայն .
 Նախ եւ առաջին Տեառըն Գերեզման ,
 Սուրբ Երուսաղէմ, քաղաք պատուական .
 Յոյժ ահեղագոչ իջմամբ մեծաձայն ,
 Պար առնեն մուսայք միշտ համանդամայն ,
 Մեղ Քրիստոնէից լեր դու օգնական .
 Սուրբ Երուսաղէմ, քաղաք աննման .
 Գեթսեմանի ձորն արքունական ,
 Ուր Աստուածանին դիրն է եւ տապան ,
 Անդ լինելոց է վերջին դատաստան .
 Սուրբ Երուսաղէմ, քաղաք պատուական .



Ամենայն սրբոց ես ընդունարան,

Եւ մեղաւորաց մարդկան քաւարան.

Ի քէն մտանեն 'ի յերկնից խորան,

Սուրբ Երուսաղէմ, քաղաք աննման.

Աիրտ երկրի ես դու Տեառըն տիրական,

Հանդոյն Աթոռոյն քերովքէ ական.

Ոտից Արարշին եղեր պատուանդան,

Սուրբ Երուսաղէմ, քաղաք պատուական.

Արդ՝ չունիմ կարիք՝ զօր քեզ է արժան

Բարբառել բանիւք գովասանական.

Կոմ տաղիւ չափել երդ ներբողական,

Սուրբ Երուսաղէմ, քաղաք աննման.

Ցնծութիւն ես դու աշխարհի համայն,

Առաւել Հայոց ազգիս Արամեան,

Որք սերտ սիրով դիմեն առ քեզ գան.

Սուրբ Երուսաղէմ, քաղաք պատուական.

Երեք տաճար են աստ հիացական,

Մեծի Յարտւթեան եւ ուրբ Ծննդեան,

Եւ սուրբըն Յակովք փառաւորական.

Սուրբ Երուսաղէմ, քաղաք աննման.

Արքային երկնից բարելի սեղան,

Խունկ եւ Պատարագ՝ ի քեզ վերանան.

Ներհք սուրբ Հոգուոյն քե առ մեզ միշտ գան.

Սուրբ Երուսաղէմ, քաղաք պատուական.

Լցեալ տօմարիս մեր Յարեթական՝

Հաղար եւ ութսուն թիւն էր՝ ի լրման,

Յակովքս այս Երդ քեզ ընծայեցան.

Սուրբ Երուսաղէմ, քաղաք աննման.

Եին անեղին՝ սուրբ Երրորդութեան
 Փառք եւ գոհութիւն միշտ եւ յաւիտեան
 Արա զմեղ արժան քոյին տեսութեան,
 Սուրբ Երուսաղէմ, քաղաք պատուական։
 Դասք երկնից զօրաց շուրջ զքեւ պարեն,
 Ըլխաչեալ Փրկիչն մեր օրհնաբանեն,
 Որ եկն ազատեաց զմեղ գերողէն,
 Սուրբ Երուսաղէմ, քաղաք աննման։
 Այ նման քեզ ՚ի մեջ աշխարհի,
 Որ յար նման ես վերին Ախոնի.
 Արժան արա, Տէր, տեսլեամբ սուրբ երկրի
 Զազգըս մեր համայն սիրով ըղձաղի։





ԵՐԳ ՀԻՆԳԵՐՐՈՐԴ

Ի վերայ սրբոյ Գերեզմանին Քրիստոսի :

Իմոյ Փրկչին սուրբ Գերեզման ,
Աննիրհ Տեառն դու քընարան .
Զուարթունն ձայնէր ուրախական՝
Քրիստոս յարեաւ 'ի մեռելոց .

Սոր վիմափոր դիր հրաշական
Աստուածային մարմնոյն ննջման .
Զինուորքն եղեն զարհուրական .
Քրիստոս յարեաւ 'ի մեռելոց .

Օթեալ 'ի քեղ լոյսն իշական
Յերիս շրջան արեգական .
Ելմամբն 'ի քէն կնիք քո չեղծան .
Քրիստոս յարեաւ 'ի մեռելոց .

Տարեալ 'ի քեզ զվէմն երկրալիր՝

Մագեաց 'ի սփիւռս լոյս երփնածիր ,

Կռամօլութեանց տայ ցան եւ ցիր .

Քրիստոս յարեաւ 'ի մեռելոց :

Առիւծն Յուդայ այն Յակովեան

Յառնէ 'ի քէն 'ի քնոյ ննջման ,

Կապոէ զկապուտն յաղթողական .

Քրիստոս յարեաւ 'ի մեռելոց :

Բամբ իւղարեր կանանց եկին ,

Զվէմն 'ի դրանց բարձեալ տեսին ,

Զուարթնոյն լուեալ տարածեցին .

Քրիստոս յարեաւ 'ի մեռելոց :

Են յարեալ նախ Մօրն երեւեալ ,

Մագդաղենոյն յետոյ յայտնեալ

Մետասանից տպա դիմեալ .

Քրիստոս յարեաւ 'ի մեռելոց :

Աերովէն կոյր տռ դրան քօյին ,

Լուսափոյլ էր նիստ 'ի վիմին .

Զայնիւ մեծաւ գոշէր ուժգին՝

Քրիստոս յարեաւ 'ի մեռելոց :



ԵՐԳ ՎԵՑԵՐՐՈՐԴ

Գուշասանութիւնն ՚ի վերայ սրբոյ Գերեզմանին
Քրիստոսի *

Սուրբ գերեզման յայտ գովելի ,
Համայն ազանց եռ ցանկալի .
Առ քեզ դիմեմք աղերսալի ,
Ո՛վ հրաշալի սուրբ Գերեզման .
Ամոռ եղեր դու Արարչին ,
Հանգստարան անմահ Փրկչին .
Զարչարելոյն ՚ի փայտ խաչին ,
Լուսածաւալ սուրբ Գերեզման :
Այն օր ՚ի նմին ահեղ գոշեաց ,
Երեքօրեայ ՚ի քեզ ննջեաց .
Ինքն զարթեաւ եւ զմեղ փրկեաց .
Ո՛վ հրաշալի սուրբ Գերեզման .
Դու եռ պարծակք քրիստոնէից .
Յոյս յարութեան մեղ համայնից .
Ըղքեղ Աստուած փառօք ելից ,
Լուսածաւալ սուրբ Գերեզման .
Ի Սերովքէից օրհնաբանիս ,
Ի քրիստոնէից երկրպագիս .
Քան զարեգակն պայծառ փայլիս ,
Ո՛վ հրաշալի սուրբ Գերեզման .
Լուսապայծառ սուրբ Գերեզման ,
Աստուած օրդւոյն տեղի թազման ,
Անմահութեան հոտոյն բուրման ,
Լուսածաւալ սուրբ Գերեզման :

Սուրբ եւ մաքուր Գերեզման կոյս ,
Քրիստոնէից պարծանք եւ յոյս .

Ի քէն բղիսի միշտ պայծառ լոյս ,
Ո՛վ հրաշալի սուրբ Գերեզման :

Յօյժ փափագիմք օրհնեալ տեսոյդ ,
Եւ կարօտիմք քաղցրիկ գեղոյդ ,
Երկրպագեմք քարիդ՝ հողոյդ ,
Լուսածաւալ սուրբ Գերեզման :

Արժանացն քում տեսութեան ,
Եւ բաց մեզ դռւռն ողորմութեան .
Քանզի դին եմք անզին արեան ,
Ո՛վ հրաշալի սուրբ Գերեզման :

Գերեզման ես լուսափայլեալ ,
Աքանչելափառ Տաճար կազմեալ ,
Տեսուն Աստուծոյ տուն անուանեալ ,
Լուսածաւալ սուրբ Գերեզման :

Հարսափելի ես Հրեշտակաց ,
Եւ տոկալի հողեզինաց .
Դու յարկ եղեր Բանին կենաց ,
Ո՛վ հրաշալի սուրբ Գերեզման :

Ի քիմս անոյշ հոտ ծաւալի ,
Ըզսեամքս քո համբուրողի .
Զքեզ տեսողաց բիւր երանի ,
Լուսածաւալ սուրբ Գերեզման :

ԶԳերեզմանդ կնքեալ բանան ,
Եւ ցնծութեամք անդր ընթանան .
Զլոյս քո տեսեալ ուրախանան ,
Ո՛վ հրաշալի սուրբ Գերեզման :

Ա.ա. Խաղեալն ՚ի քեզ մաղթեմք ,
 Արժանանատլ տեսոյդ խնդրեմք .
 Նմա եւ քեզ երկրպագեմք .
 Լուսածաւալ սուրբ Գերեզման :

ԵՐԳ ԵՕԹՆԵՐԻՈՐԴ

Դարձեալ ՚ի նոյն՝ աղերսախառն :

Ա.ո. քեզ եկից սրտափափագ ,
 Զքեզ համբուրել տենչիւ անյագ .
 Զիս ՚ի մեղաց փրկեաւ արագ .
 Մեղաց փրկող սուրբ Գերեզման .
Ի.մէջ մեղաց անկեալ դերի .
 Յամես կողմանց գտեալ թերի .
 Ողորմես՝ ինձ մեղաւորի ,
 Մեղաց փրկող սուրբ Գերեզման .
Ի.դուռնըդ գամ լժէպէտ լալով .
 Բայց փառս տամ աղօթելով .
 Լուսոյդ հոտովին զմայլելով .
 Մեղաց փրկող սուրբ Գերեզման .
Բազոււք ընդ իս ընթացակից .
 Ես ՚ի սէր քս յատարդ եկից .
 Սրբիլ հոգւով երկրպագից ,
 Մեղաց փրկող սուրբ Գերեզման .
Կամաւ ՚ի խաչ բեւեռելոյն .
 Արիւնաներկ խոցեցելոյն ,

Փառօք ՚ի քեղ թաղեցելցն ,
 Մեղաց փրկող սուրբ Գերեզման .
Զայխարհ ամեն զուարթերես
 Արքով կապեալ յոտորդ բերես
 Եւ համայնից նոցա ներես ,
 Մեղաց փրկող սուրբ Գերեզման .
Անմահ Փրկչին դու աննման
 Եղեր տեղի մարմնոյն թաղման .
 Եւ ՚ի Հօրէ լուսոյն ծագման
 Անուանեցար լցո Գերեզման ,

ԵՐԻ ՈՒԹԿԵՐՐՈՐԴ

Աւշերձ մաղթանաց առ, Աշխարհամատրան Տաճարն
 որ ՚ի սուրբ Յարութեան .

Արփիահրաշ դու հարսնարան
 կենարարին ,
 Երկինք յերկրի լուսափայլեալ
 գեր քան զարփին .
 Մահու մարմնով ննջողն ՚ի ծոց
 ՚ի քո շիրմին
 Յարեաւ փառօք , ձայնէր զուարթունն
 ահա տեղին .

Ապյր Տաճարաց սուրբ Յարութիւն
 մեր հոգեծին ,
 Անմահութեան ՚ի քէն պարզեւը
 մեղ ծագեցին .
 Առ ընդհանուր Եկեղեցիս
 ծագաց երկրին ,
 Բզվացին գետը յարդախաղաց
 ջուր կենդանին .
 •**Քեզ** յամենայն լեզուաց ազգաց
 անելոելին
 Ակչտ օրհնարան հոգենուագ
 ձայնը ասու հեշին
 Քեւ արդ փառօք ցնծայ յաւէտ
 ազգ Հայկացին .
 Ի նոր սեղսն զենմամբ անմահ
 որբաց Գառնին .
Արդ Խոնարհեալ որբաց Տեղւոյս
 շնորհաց քային
 Փառա վեր երգեմբ յարուցելոյ
 քեզ Անմահին .
 Երկրագուացա՝ ուր կամբ որբաց
 Գերեզմանին ,
 Տացես դասիկ յանմահական
 քում վիճակին .
Յողոք անկեալ մաղթեմբ զլոյսդ
 իմանալին ,
 Յերկնախումբ պար խոսնեալ զմեզ
 տաճար վերին .

Պամեալքս աստեն ՚ի միութիւն
սրահի բային

Գեղանցոյ զմայլեսցուք
յիսկականին .

ԵՐԳ ԵՆՆԵԲԲՈՒՐԴ

Առ. սուրբ Բանան .

ՔԵՂ Հօր լուսոյ երկնաւօրի
Հոգւով բեկման
Երկրագեմք ՚ի Տաճարիս
այս սրբութեան .
Ուր միածին Ուզիդ եկեալ
լոյսն անսահման ,
Վառեաց զաէր ընդ Առուծոց
և ընդ մարգիսն .

Ա Ճապհագոյժ այս վայր Փրկին
օրբասահման
Եղեւ չորրորդ տեղի մթին
բանտ արգելման .
Ուր դա վերջին հառեալ վառաց
անսրգական ,
Յաղերս առ քեղ ձեռք մեր յերկինս
աստ ամբառնան .
Հան ՚ի բանեաս , լոյծ ՚ի կապէս
զամենեան

Ուղղեան գնալ զհետ Որդւոյդ
միշտ անխափան .
Հանգն զհոգիս նախնեաց մերոց
յերկնից խորան ,
Պարիւ ցնծալ ընդ Հրեշտակաց
՚ի յաւիտեան .

ԵՐԳ ՏԱՄՆԵՐԻՈՐԴ

Ի տեղին՝ ուր զիանդերձան բաժանեցին .

Փրկիչ մեր եւ Տէր յազթողն մահու
տուիչն կենաց ,
Գայ ՚ի մահ Խաչի , տայ զարիւն իւր տուրբ
՚ի գին փրկանաց ,
Աւյնմ՝ որ արկանէ որպէս զհանդերձ
զրոյս անձառ փառաց ,
Վիճակ արկանեն հանդերձի նորա
դասընն զինուորաց ,
Որում վկայէ մեզ տեղիս այս սուրբ
պատեալ Հրեշտակաց
Ընդունելով միշտ երկրպագութիւն
յիւրոց սիրողաց .
Ուր այժմ ՚ի թափօր պար առեալ շրջիմք
ձայնիւ երդասաց ,
Եւ աղաղակեմք լուր Փրկիչ բարի
մեր պաղատանաց .

Ուրկեամ ՚ի մէնը Տէր մերկութեամբ քոյին
 զգործ խաւարտմած ,
 Եւ դգեցն մեղ զէն արդարութեան
 զզրահ անթափանց ,
 Փոխան հանգերձիդ՝ որ անհերձ մնաց
 վլճակ զինուորաց ,
 Վիճակեամ ըզմեղ ՚ի քո միութիւն
 յերկրին կենդանեաց *

ԵՐԳ ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Ի վերայ սրբոյ Խաչին :

Միշտ որ ընդ Հօր՝ է նա պարզ մի ,
 Որ ընդ աջմէ նորին բազմի .
 Այսօր ում Խաչ ամոռ կազմի ,
 Հանգչարան մի ոչ գտանի .
 Յարակցեալ ընդ մարմնոյ բաւի ,
 Որ բարձողն է մերօյս ցաւի .
 Խոկ այժմ ՚ի Խաչին ծարաւի ,
 Արբուցիչ մի ոչ գտանի .
 Աղբիւր կենաց յորմէ հեղի
 Անդուլ ՚ի դասս մարդկան ցեղի ,
 Եւ ինքն ՚ի մէջ նեղաց նեղի ,
 Հանգուցիչ մի ոչ գտանի :
 Կարդայ առ Հայր իւր սիրելի ,
 Զայն ածելով էլի էլի .
 Եղեւ մեռեալ եւ պատելի ,
 Ում պատող մի ոչ գտանի .

ԵՐԳ ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՐՈՐԴ

Ի տեղւո՞ս Գիւռակ սրբոյ Խաչին :

Մեծափափագ էին բաղձանք
Աստուածասէր սուրբ Դժխոյին ,
Մեծ թագու հւոյն սուրբ Հեղինեայ
Առ գիւտ անգիւտ օրբոյ Խաչին .


Ուր զծածկեալն հարուստ ամօք
Ընդ բաղմակոյտ խերեւեշին ,
Ուկի արծաթմ եւ մարդարիտ
Սփռեալ խնդրէր զբաղձալին .

Եւ մեք նորին շաւզաց կցորդ
Եկեալ հասաք ՚ի նոյն տեղին .
Ցածեալ ընդ ծով եւ ընդ ցամաք
Ի հեռաւոր ծագաց երկրին .

Փոխան սոկւոյ եւ արծաթոյ
Եւ բաղմաթիւ այն մարդարսին ,
Զհաւատ , զյոյս , զսէր անկեղծ
Մատուցանեմք կենարարին :

Զբեղ աղաւեմք՝ պահեամ Փրկիչ
Ընդ հովանեաւ քո սուրբ Խաչին ,
Զշերմեռանդ զերկրպագուս
Եւ զազդս ողջոյն ուր եւ բնակին .

Փրկեամ զնոսա չար արկածից ,
Տնւր քաւութիւն մեղաց նոցին ,
Ուրախացն տեսութեամք քով
Ի յերեւիւ սուրբ Նշանին .




ԵՐԳ ԵՐԵՔՏԱՍԱՆԵՐՐՈՐԴ

Առ. Փուշ Պատկն :

Աթոռ շնորհաց աստուածաբարձ
Քառակերպեան կառաց քատակ ,
Թագաւորին քո պատմուձան
Ոչ բեհեղեայ գերփառունակ ,
Ամլ հնոտի քղամիտ կարմիր
Զգեցուցին առնել ծանտի .
Եւ բարձողին զփուշ մեղաց
Եղին 'ի գլուխ փշեայ պսակ .

Տուեալ զեղեգն յաջոյ ձեռին
 Փոխան սոկւայ գաւազանին .
 Ի ծունը իջեալ բարբառեին՝
 Ողջ լեր, Արքայ, Հրեից ազգին .
Ծածկեալ զերեսըն տանջեին ,
 Զգլուխն եղեգամբ հարկանեին .
 Եւ հանեին նմա ապտակ ,
 Եւ ով եհար՝ հարցանեին .
Մեղ էր պատկան փշեայ պսակ
 Եւ դան մահու դառնագունին ,
 Զոր ընկալար Աստուած հզօր ,
 Առ ՚ի փրկել զազդ մարդկային :
Աստուածազարդ դու պսակեա՛
 Զմեր գլուխ չնորհօք քոյին .
 Մեր երեսաց ամօթ յետին ,
 Եւ քոյին փառք միշտ բարձրացին :





ԵՐԳ ԶՈՐԵՔՏԱՍԱՆՆԵՐՐՈՐԴ

Գովասանք ՚ի վերայ սուրբ Գողգոթային :

Առարք Գողգոթայն բարձր է շնեալ,
 Պայծառափայլ է յօրինեալ .
 Արիւնաներկ Խաչ է կանգնեալ .
 Եկայք ելցուք ՚ի Գողգոթա :

 Առարք Գողգոթայն շնորհազեղ,
 Բոլորովին է ուխտատեղ,
 Հող եւ բարինքն են մեղաց դեղ .
 Եկայք ելցուք ՚ի Գողգոթա :

 Առարք Գողգոթայն մինչ շնեցին ,
 Կաթամր զկիր շաղախեցին .
 Զի ըզտէր մեր անդ խաշեցին .
 Եկայք ելցուք ՚ի Գողգոթա :

Սուրբ Գողգոթայն է գեղեցիկ ,
ի ըրջապատն Եկեղեցիք ,
Սուրբ ըղիսաշն անդ պաշտեցիք .
Եկայք ելցուք 'ի Գողգոթա .

Սուրբ Գողգոթայն տեղ է լալոյ ,
Եւ ըզմեղս մեր քառելոյ ,
Ըզդուռն երկնից առ բաղիսելոյ .
Եկայք ելցուք 'ի Գողգոթա .

Սուրբ Գողգոթայն սարսափելի ,
Յոր աղօթելն ընդունելի ,
Դիւրին լինի անդ լսելի .
Եկայք ելցուք 'ի Գողգոթա .

Սուրբ Գողգոթայն ակնեղեն թագ ,
Տեսանողաց կրկնի փափագ .
Աղօթու առնել անդէն անյագ .
Եկայք ելցուք 'ի Գողգոթա .

Սուրբ Գողգոթայն է սուրբ վայր մի ,
Համբու բողաց Տէրն ողորմի ,
Առ գտանել մեղաց ձար մի .
Եկայք ելցուք 'ի Գողգոթա .

Սուրբ Գողգոթայն է բարետուր ,
Զհայողն 'ի վեր կալնու զարհուր ,
Միշտ հոտ անոյշ տայ քաղցրաբոյր .
Եկայք ելցուք 'ի Գողգոթա .

Սուրբ Գողգոթայն գերամբարձեալ ,
Յոր խաչեցաւ Փրկիչն օծեալ ,
Որ զՅովհաննէս փոխանակեալ ,
Որդի ետ մօքն ամենօրհնեալ .

ի Գողգոթա տարածեցին ,

Ըզձեռու եւ զոտան ծակեցին ,

Զմայրիկն ՚ի դէմն լացուցին ,

Զի սուրբ ըզմիրտն խոցեցին :

Քրիստոս Աստուած մեր խաչեցաւ ,

Ի գողգոթա բեւեռեցաւ ,

Յերեկն ՚ի խոր գիշեր դարձաւ ,

Զի արեգակն խաւարեցաւ :

Յայնժամ սուրբ կոյսն Աստուածածին

Կայր առ Խաչի պատուանդանին

Փետէր թափէր զմազն ՚ի դետին

Զի Սիածինն եր ՚ի Խաչին :

ԵՐԳ ՀՆԳԵՏԱՍԱՆԵՐԲՈՐԴ

Դարձեալ առ սուրբ Գողգոթա :

Առ Փրկիչ եւ յօս մեր

ընդ այսքան խոնարհիս ,

Ի գագամ այս լերին

մահագոյժ տարածիս ,

Ո՞ւր քո դէմք լուսափայլ

երկնաւոր Աբբայիս ,

Երկրաբարշ խոնարհեալ

ծով արեան ծածանիս :

Յագնապաւ դողլացան

ընդ աեսիլ ահագին

Վերնային լուսաւորք
 եւ երկիր ընդ նոսին .
 Ուր վասն իմ քառամթեւ
 տարածեալ 'ի խաչին .
 Բարձրացար 'ի տեղւոջ
 ետուր զքեզ առ իմ զին .
Տէր 'ի քո յայս բեմես
 դարձ հայիլ սիրաբուն
 Առ փրկեալքս քո արեամբ
 առ սուրբ ուխտս այս ողջոյն
 Յօղեսցին ցողք շնորհաց
 'ի վերայ քոց 'ի նոյն ,
 Տացին մեզ կեաներ անմահ
 յայս անպարտ քում մահուն :

ԵՐԳ ՊԵՇՏԱՍԱՆԵՐԻՈՐԴ

Առ սուրբ Պատանատեղին :

Յարեմաթեայ Յովսէփ արդար
 ի սուրբ Խաչին առ զՏէրն 'ի վայր ,
 Երեքսրբեան երգ խաչեցար
 Երգարանէր մաղթողաբար :
Հրաբորքոք խոցք բեւեռաց
 Հատանէին զշանիթ կայծականց ,
 Որով բազմէր նորին բազկաց
 Վարդակարմիր արեամբ ներկած :

Այլկողեմոս անդ հանդերձէր
 Զմուռս, հալուէս, իւզս 'ի նուէր .
 Դա որ մահու եւ կենաց տէր
 Աստ 'ի պատանս օծանէր .
 Պատարագէր յայս տեսարան
 Երանուհին մայր Մարիամ .
 Տարտամ մտօք յուշամթափման
 Եք իւր Որդւոյն 'ի յանդիման .



ԵՐԳ ԵՕԹՆԵՒՏԱՍՆԵՐՐՈՐԴ

Ի՞նչերայ սրբոց Յակովեանց Տաճարին :

Համայն աղանց ես գովելի
պայծառ Տաճար գեղեցիկ .
Հիմնեալ յանուն Առաքելոց
սուրբ Յակովեանց երջանիկ .
Եքեղապանծ ձեւով կանգեալ ,
շափիւզայ են քոյդ քարինք .
Պարծանք մերոյ Հայոց ազգի .
ով սուրբ Տաճար ցանկալի :

Են ՚ի վերայ չորս սեանց ձգեալ
ձեղունիք ահեղ բարձրագոյն .
Առ օրս արկեալ Խմեւատարած
ամուր կամարք լայնագոյն .
Յորոյ վերայ կայ հօյակապ
գմբէթ քոյին մեծագոյն .
Պարծանք մերոյ Հայոց ազգի ,
ով սուրբ Տաճար ցանկալի :

Կերքոյ Աւագ սուրբ խորանին
կայ անգին գանձ պատուական ,
Տեառընեղբօր սուրբ Յակովայ
մարմին եղեալ ՚ի դամբան .
Որոյ սուրբ գահն ՚ի քեզ փայլի
ըստ արեւու հրաշական .
Պարծանք մերոյ Հայոց ազգի ,
ով սուրբ Տաճար ցանկալի .

Աս եւ որդւոյն Զերեգեայ
առաքելոյն Յակովայ
Սուրբ Գլխոյն դիրքն գմբէթայարկ
սեղան վերայ կազմեալ կայ .
Որով երկու լուսաւորօք
նման երկնից դու ցնծա՞ .
Պարծանք մերոյ Հայոց ազգի .
ով սուրբ Տաճար ցանկալի :

Եւ տապան սուրբ Մակարայ
որ Գլխադրին մերձ փայլի .
Մատուռն չքեաղ կից առ նմին
սուրբ Մինասայ սուրբ Արքսի .
Տաճար պայծառ Առաքելոց
են վերամբարձ և սուրբ Խաչի .
Պարծանք մերոյ Հայոց ազգի .
ով սուրբ Տաճար ցանկալի :

Ստեփաննոս , Էջմիածին
տաճարք չքեղ հրաշազա՞ն ,
Որք ընդ թեւօք յաջ և յահեակ
պարայածեալ շողշողան .
Վերնայարկիդ Պետրոս Պօղոս
առաքելոց կան սեղան .
Պարծանք մերոյ Հայոց ազգի .
ով սուրբ Տաճար ցանկալի :

Կայ ՚ի ծոցի մետասանիդ
սուրբ Խորոսի մեծ Տաճար ,
Հոգւոյն Արբոյ զատ այլ մատուռն
ձգեալ բարձանց գեղապար .

Քսան և եօթն ՚ի միջի քում
խորանք պաշտին զերափառ ,
Պարծանք մերոյ Հայոց ազգի ,
ով սուրբ Տաճար ցանկալի .

Յաւելիալ յետոյ :

Ի սոցին վառս յաւել ՚ի քեզ
դար որ առ մեզ ոսկեղէն ,
Հիմնադրութիւն քո Վերնատան
գաւթեան վերայ մեծաշէն .
Լուսամտօք անդ եօթնեքումբք
ճաճանչ պայծառ շողտղեն .
Պարծանք մերոյ Հայոց ազգի ,
ով սուրբ Տաճար ցանկալի .
Երգ մաղթանաց եօթնափառեան
օրհներգութեանց աստ մատզին .
Ընդ անարիւն ձօն հաշտարար
անմահ զենման սուրբ գառին .
Պայծառազգեացդ և ծաղկասփիւռ
թափօր ՚ի պար բոլորին .
Պարծանք մերոյ Հայոց ազգի ,
ով սուրբ Տաճար ցանկալի .



ԵՐԳ ՈՒԹԵՒՏԱՍՆԵՐՐՈՐԴ

Դարձեալ պատմաբանօրէն 'ի վերայ Գլուխղրի
սրբոյն Յակովայ :

Բրիտառոսի սուրբ Գերեզման

Միշտ կանթեղք քո են 'ի վառման
Որք ուխտ գնեն եւ առ քեզ գան
Ամենեցուն լեր օդնական :

Սուրբ ըզՅակովը գլխատեցին ,

Նախ ՚ի Սաղիմ ամփոփեցին ,

Եկեղեցի հիմնարկեցին

Սուրբ Գլխադիր անուանեցին :

Ապա Հրեշտակը անոի առին

Զ'առանց գլխայ նորին մարմին ,

Հրամանաւն ասոռուածային

Ի Սպանիա քաղաք տարին :

Եւ քաղաքն այն էր մերձ գետոյն ,

Զմարմինն եղին յեզր ջրոյն ,

Ի յազդմանէ Աստուած հոգւոյն

Ընդ այդն եղեւ գալ ժողովոյն :

Ապղքըն և կոյրք միահաղոյն

Եկին լուանիլ ՚ի մեջ գետոյն ,

Անդ պատահեալ նոյն սուրբ մարմնոյն

Բժշկեցան յամեն ցաւոյն :

Ուրախութեամք դարձեալ ՚ի տուն

Մեծ աւետիս մարդկան ետուն ,

Ցոր թէ ռամիկ թէ իմաստուն

Զարմանալեօք լցան համբուն :

Խորհրդակցեալ ընդ արքային
 ի գետըն յայն ջոկ ջոկ գային ,
 Տեսեալ զնա արտասուեին ,
 Անգլուխ Աստուած անուանեին .
Քերեալ բեհեղ զայն պատեցին
 Եւ ՚ի քաղաք անդ հանգուցին ,
 Պատուեցին յոյժ և պաշտեցին
 Խրեւ զԱստուած մեծացուցին .
Մինչեւ սուրբըն Պօղոս գնաց
 Քարողել անդ զբանն կենաց ,
 Սպանիացւոց զմիռս երաց ,
 Դա մեր եղբայրն է մինչ ասաց .
Մոլորութիւնը Նոցին բարձան
 ի պաշտմանէ կռոյ դարձան ,
 Եւ Քրիստոսի հետեւեցան ,
 Արբայութեան արժանացան :



ԵՐԳԻ ԻՆՆԵՒՏԱՄՆԵՐՐՈՐԴԻ

դարձեալ պատմաբար՝ ի վերայ սրբոյն Յակովեալ։

Առաքեալն սուրբ Յակովը
որդին որոտման,
Զոր կալեալ չարշարէր
Հերովդէս արքայն։
Եղեւ նա գլխատեալ
յազգէն տիրաօպան,
Զի զբաժակն ըմպել
Տեառն էր հրաման։

Վեր սուրբ Կոյսն Տիրամօր
առաքեալն Յովհանն
Աինչ կային վարանմամբ
զՅակովը այն կալման,
Հրեշտակն բերեալ
զգլուխն պատուական,
Եղ նոցա առաջի
կոծով թախծուի էանն։

Զոր առեալ հանգուցին
զգլուխն սրբազան
ի տեղոջ պատշաճեալ,
զՏէառնէ գոհացան.
Ուր վանք մեծ շինեցաւ
թագաւորական,
ի ձեռն կոստանդիու
եւ մեր Տրդատայն։

Ընդ սուրբ Հուատորչին
 աղդիս Հայկազնեան ,
 Եթ սուրբն Անդքեսորոս
 պատրին Հառիմայն .
 Եինեցին յոյժ ոիրով
 զտելիս որբութեան .
 Զատաձարին Յարութեան
 եւ զայլս ամենայն .

Հաստատեալ մայր Ամես
 առաքելական
 Զատաձարին սուրբ Յակովը
 Պատրիարքական ,
 Որ է վայր ցանկալի
 աղանց ամենայն .
 Եւ աղդիս Արտամեան
 պարզեւ սեպհական .

Արդ է մեծ եւ պայծառ
 վանք Երևանաման ,
 Գլխադիր սուրբ Յակովը
 փառօք աննաման ,
 Տուեալ տանո Թողթամայ
 ընծայ յատկական ,
 Աւխոտորաց բաղմաց
 Հանդիսառ օժարան .

Առ սոս Յակովայ
 գերահրաշ Աւխտին ,
 Դան յամեն կողմանց
 Եւ անդ ժողովին .

Եւ առնեն բարեխօս
զնա Արարշին ,
Աղօթիւքն արժանի
գոլ վերին Դրախտին ,

ԵՐԳ ՔՍԱՆԵՐՐՈՐԴ

Գովասանոթիւնն ՚ի Վերայ քաան ևս հինգ խորանազն՝
որ ՚ի սուրբ Յակոբայ վանա .

Սախ եւ յառաջ զԱւագ խորան
Առնուլ ՚ի դէպ է ինձ արժան ,
Որ է պայծառ և աննման ,
Ունի զտիպ արեգական :

Ը ՚ի ներքոյ սորին պանձայ
Մարմին եղբօր Տեառն Յակովայ ,
Որ ՚ի Հրէից սպանաւ նա ,
Ուր մինչեւ ցայժմ ամփոփեալ կայ .

Յերկուս կողմանս սուրբ Սեղանին
Երկու խորանք կան ՚ի կարգին ,
Մինն է սրբոյ Աստուածածնին ,
Խոկ միւսն սուրբ Կարապետին :

Յ ՚ի վերայ սոցին հիման
Երկու փոքրիկ կան այլ խորան ,
Սուրբ Պօղոսի և Պետրոսի
Առաքելոցըն սրբազան :

Յահեկակողմն սոյն Տաճարի
 Գոյ սիրուն մի եկեղեցի ,
 Յանուն օրբոյ Եջմիածնի ,
 Ուր կայ սեղան սուրբ Արքայի .
Թաէ 'ի գրան կողմն դարձցիս
 Եւ 'ի սանդղոց 'ի վեր ելցես ,
 Երկու խորանս այլ եւս տեսցես ,
 Եւ ջերմ սիրով համբռութեսցես .
Մինն Ընթրեաց սուրբ Խորհրդին ,
 Այլափոխման է երկրորդին ,
 Նորոգ եղեւ շինուածք սոցին
 Նախ քան զծեփ սուրբ Տաճարին .
Վերնատանէն 'ի վայր իջեալ ,
 Յաւանդատունն գնացեալ ,
 Ստեփաննոս է աս կոչեալ ,
 Որ 'ի սէր Տեառն նախ վկայեալ .
Կըկին սեղան անդ ճօխ փայլի ,
 Մինն յանուն սուրբ Լուսաւորչի ,
 Եւ միւսն սուրբ Ստեփաննոսի ,
 Որբ սիրելիք են Քրիստոսի .
Կայ անդ այլ և մեծ Աւաղան
 Հայրապետի կիւրզի անուան ,
 Կենաց փայտին 'ի յերեւման
 Երկու հազարք մկրտեցան .
Եւ դու աստի գալ 'ի կարգին ,
 Տես զսեղան սուրբ Գլխադրին ,
 Ուր ամփոփեալ է Գլուխ նորին ,
 Մեղ պարզեւեալ գանձ մեծագին .

Ե մերձ սորա երկաթ դուռ մի
 Ուր կայ ազնիւ պահարան մի ,
 Եւ սուրբ Մինաս նա անուանի ,
 Որ յարաժամ փակեալ պահի ,
 Ուր ոսկեղէն արծաթեղէն
 Խաչ եւ կանթեղը անօթեղէն ,
 Արբոց մասունք բոլորն ամեն
 Մեծաւ խնամօք պահին անդէն .
 Գոն անդ և այլ երկու խորան
 Ազնիւ շքեղ և աննման ,
 Արբոյն Սարգսի և Մինասայն
 Զօրավարաց մեծաց անուան .
 Կից սորա էր և դամբարան
 Մաքուր տապան սուրբ Մակարայն ,
 Զի յԱթոռ յայս նստաւ և այն ,
 Աստ ամփոփեալ յետ իւր մահուան .
 Ի վերայ սոցա սուրբ Խաչ շնեալ ,
 Կան այլ երկու մաստրունք կազմեալ ,
 Առաքելոց մինն անուանեալ ,
 Սուրբ Համբարձման միւսն կոչեալ .
 Գոն արտաքոյ սուրբ Տաճարի
 Եօմն սեղան յոյժ պահնծալի ,
 Երկուքն ՚ի մէջ գաւթին մեծի
 Սուրբ Նիկողեայ և Գէորգի .
 Զորսն ՚ի մէջ սուրբ Թորոսի ,
 Որ է յատուկ Եկեղեցի .
 Եինեալ ազնիւ և գովելի
 Զեռամբ Հեթում թագաւորի .

Եւ 'ի տանիստ սոյն Տաճարի
Գոյ և փոքրիկ այլ մատուռ մի ,
Որ Հոգին Սուրբ նա անուշանի ,
Անտի սուրբ Լեառն տեսանի :

Սոքա յիցին միշտ անխափան
Մեղ օգնական և պահապան ,
Որք թուեցան յայս երգարան
Քսան և հինգ ահա խորան :

ԵՐԳ ՔՍԱՆԵՒՄԻԵՐԲՈՐԴ

Դարձեալ գովեատ 'ի վերայ սրբոյն Յակովբայ :

Ո'վ սուրբ Յակովը ամենօր հնեալ ,
Սիրով Հոգւոյն դու առ լցեալ ,
Զի սուրբ անունդ է հռչակեալ
Բոլոր յաշխարս տարածեալ :

Ճեպեալ դիմեն վառեալ սիրով
Ուխտաւորքըն անհուն ծովով ,
Տիւ և գիշեր արտասուելով
Ի յօդնութիւն զքեղ կոչելով :

Զի որք սիրով առ քեզ դիմեն
Եւ արտասուօք զկուրծս բաղխեն ,
Փութով առնուն զոր ինչ խնդրեն
Արեամբ ներկեալ քո սուրբ Գլխէն :

Ալրդ աղաւեմ բարեխօս լիր ,
 Մի դադարիր առ Հայր և Տէր ,
 Արտգապէս օգնական լիր ,
 Ուխտաւորացն ընծայաբեր :
 Ուխտաւորըն երբ գան ժաման ,
 Զիլիշտո բոլոր մնդ մոռանան
 Ի մէջ գաւթին ձեմեալ ցնծան ,
 Հոգւով հրձուեալ ուրախանան :
 Յրանի տամ փափագողաց ,
 Ուխտաւորաց այն եկողաց ,
 Բզուրբ Տեղիս համբուրողաց ,
 Նոյին զշնորհս վայելողաց :

ԱՌ ձանապարհ բարի Յիսուս ,
 Դուռն կենաց մտից Փրիստոս ,
 Որք ՚ի ծովաւ են կենցաղոյս
 Ըղքեզ ունին միայնակ յօյս :
 Տէրունական Ուխտաւորաց
 Ի սուրբ Տեղիս քո դիմողաց ,
 Սիրով քոյին զմայլողաց
 Լեր ուղեկից յամեն դիմաց :
 Զհուր սիրոյդ յերկիր արկեր ,
 Գեղով սիրոյդ բորբոքեցեր .
 Զտեղիս զայս զոր ընտրեցեր ,
 Սուրբ կարօտոյդ մեզ դեղ ցուցեր :

Սուրբ Յակովը բաժակարբուն
Եւ Յակովը եղօր քոյին ,
Ազաւանօք Պետրոս վիմին
Ուխտաւորաց տուր հայցելին :

Գերեզմանի քո համբուրման ,
Գողգոթայի տեղւոյդ զենման ,
Սուրբ Աթոռոյ երկնանման
Զամենեան արա արժան :

ԵՐԳ ՔՍԱՆԵԻԵՐԿՈՒԵՐՐՈՐԴ

Դարձեալ ՚ի վերայ սրբոյն Յակովայ :

Ո՛վ իմ եղարք յականջ առէք զիմ զբան
Սուրբ Յակովը տաճարն է այս աննման ,
Սարսափելով մտի ՚ի սուրբ Գերեզման ,
Լալով Շիրմին համբուրեցի ես զբարն :

Սուրբ Յարութիւն մեծ է և սուրբ Յակովը դա
Սողոմոնի Տաճարն անտի դարու վար ,
Ինքն ՚ի տեղ բարձր և բոլորն նորին սար .
Արիք տեսէք զՔրիստոսի սուրբ եղբայրն :

Ամիրայք և Պարոնայք դուք ում աստէն սպասէ
Եկայք զվայրն զՔրիստոսին դուք տեսէք .
Միոյն հազար տայ ձեզ՝ ընդէր անյօյս էք ,
Մեզ բարեխօս լինի Աստու ածամայրն :

ի գերեզմանն Աստուածածնի շատ լացի ,
 Զաշս մտաց զգաստութեամբ անդ բացի .
 ի Դաղարու գերեզման անդր գնացի ,
 Անտի Ելի 'ի Համբարձման սուրբ լեռոն .
 Առւրբ Համբարձման լերին մի կողմըն գեղ է .
 Մեղաւորաց փրկիչ ւ'ախտից մեծ դեղ է .
 Եկայք տեսէք որպէս չքնաղ այն տեղ է ,
 Զի սուրբ Սաղիմ գեղեցիկ Ուխտատեղ է .

ԵՐԳ ՔՍԱՆԵԼԵՐԵՔԵՐՈՐԴԻ

ի վերայ վաճուց սուրբ Հրեշտակապետի .

Դրախտ տնկախիտ
 'ի մէջ քաղաքին ,
 Առւրբ Հրեշտակապետ
 նախկին բանտ Փրկչին .
 Աստ ներկայացաւ
 'ի դատ Աննային ,
 Ուր և կապեցաւ
 'ի ծառ ձիթենին .
Հրեշտակ ահաքեկ
 նորին ձաղանաց ,
 կային սասանեալ
 շուք եղեալ փառաց .

Անդանօր մի սմի
 'ի սպասաւորաց ,
 Տայր նմա ապտակ
 լինէր դիմադարձ .
Կռւսանք սրբանուէր
 կան 'ի պաշտաման ,
 Քաղաքացւոց այս
 Տաճար սրբազն .
 Տեղի ընորհաց ,
 մեղաց քաւարան ,
 Մի միայն պարծանք
 Աղջիս Արամեան .

ԵՐԳ ՔՍԱՆԵՒՉՈՐՈՌԴ

Ի վերայ վանուց սուրբ Փրկչին .

Երկրորդ բանտ Փրկչին
 մերձ սուրբ Ախովնի ,
 Կանխաւ տուն աստ լեալ
 Կայիտափայցին .
Երկրպագելի
 փոշի սուրբ Երկրին ,
 Ուր թուք եւ ապտակ
 տուան իմ Փրկչին .

ԱՆԴ Հարցեալ Պետրոս

Երիցս գայր յուրաստ ,
Հուռուն խօսելոյ
Գայր անդրէն յիմաստ ,
Յակնարկել Փրկչին
բան տայր նմա աղդ ,
Յարեան արտասուաց
մտանէր դարաստ :

ԱՆԴՆԵԱԼ ՚ի տեղւոջ

Տաճար սրբազն .
Կափարիչ սուրբ Վէմն
կաղմեալ անդ սեղան .
Յերկրպագութիւն
անդ հանդիսանան ,
Աղդաց եւ աղանց
ժողով Տէրունեան :

ԵՐԳ ՔՍԱՆԵԻՀԻՆԳԵՐՐՈՐԴ

Դարձեալ ՚ի վերայ սուրբ Փրկչալիանաց :

ՈՒՄ դիք ինձ որ գովեմ զԱմենափրկիչ ,
Կենդանեաց մեռելոց կեցուցիչ Փրկիչ ,
Ախտաժէտաց բըժիչ , դիւաց հալածիչ ,
Յիմարաց տղիտաց ուսուցիչ Փրկիչ :

Ի Գրիստոսի Շիրմեն յայն վայրըն բերին ,
 ի ներքոյ խորանին զմեծ Վէմի եղին .
 Զորս կողմն բաց թողին պատռական քարին .
 Պէսպէս մեղաց շարեաց աղատիչ Փրկիչ .
Ամեն սուրբ Տեղին խորհրդական է ,
 Բոլորն ամեն սուրբ Աղօմարան է ,
 Նորաշեն սենեակքն յոյժ պատռական է ,
 Դիւահարաց ախտից փարատիչ Փրկիչ .
Մի կողմն սուրբ Փրկչին՝ մեռելոց թաղ է .
 Միւս կողմն սուրբ Միսն այլազգեաց տեղ է .
 Եւ այլքն ձիմենեաց պարտէղ այգի է ,
 Յոյս մեղաւորաց է , եւ քաւիչ Փրկիչ .





ԵՐԳ ԳՍԱՆԵՒՎԵՑԵՑԵՐՐՈՐԴ

Ի վերայ սրբոյ Բեթղեհեմի •

Վասն իմ մանկացեալ
Փրկչիդ բոլորից ,
Սահմանը Երբախայ
ծագման քո ելից ,
Ուր ծնար անախտ
օտար մեր կրից ,
Ի բազուկ կուսին
գգուեալ գրկալից ,

Բեղ Աստուածորդւոյդ
Մառը անբանից ,
Տայ նինջ քնարեր
՚ի վերայ յարդից .

Եւ ջամբ խանդակալժ
կալժն ստեանց կռւսից ,
Անկարօտ ընութեան
Արդ մեղ համակից :

Ուր հովիոք եղեն
փառարանակից :

Երկնապար զուարթնոց
իջեալ 'ի յերկնից ,
Որոց գունդագունդ
էջք 'ի յեթերից ,
Մարդկան նշանակ
եղեն վերելից :

Փառոք քեզ 'ի բարձունո
հոգւով ցնծալից ,
Աստ մատուցանեմք
անմահ արբայիդ ,

Ու 'ի Նազարէժ
փիթթեալ ծաղկալից ,
Աստ պտղովք 'ի լի
բուրես հոտ վարդից :

Եւ քեզ ընծայեմք
ընդ Մոգուց ելից
Զերկրպագութիւն
Արարչիդ բնաւից .
Ա'ռ ընկան 'ի մէնջ
ընդ կռւսին անբիծ ,
Զաղերս մաղթանաց
տէրունեան սւխուից :



ԵՐԳ ՔՍԱՆԵՒԵԹՆԵՐԲՈՐԴ

Առ սրբամաքուր տապան Աստուածածնին :

Ամենօրհնեալ Մարիամ

Մայր Տեառն իմոյ տիրածին ,

Հասարակաց ննջեաց քուն

Ի լեառն ոռւրբ Սիովեին :

Աւ Միածին բանն Աստուած

Հրեշտակօք լուսարփին .

Գայ իջանէ յաւանդումն

Հոգւոյն յերկըէ 'ի յերկին :

Համագումար 'ի ծագաց

Սուրբ Առաքեալք 'ի տեղին ,
Համակին անդ սուրբ տեղիւ
Մեծ տրտմութեան և խնդին :

Լուսապատար ջահազգեաց

Եւ սուրբ Կուսանք ընդ Նոսին
Բարձեալ զդագաղ Տիրամօր
Գեթսէմանեան տան շիրմին :

Օթեալ եղեւ անդսնօր

Յերիս շրջան արեգին ,
Բարթողմիմեայ յետագայ
Բանի տապանն տարփագին :

Տեսին ունայն զտեղին

Եւ գերեզման առանձին ,
Քաջ նմանեալ իւր Որդւցն
Յարուցելոյ Միածնին :

Ընդ ամպաճեմն սաւ առնի ,

Ծնդ օդ թեթեւ վերնային ,
Գունդք անմահից զուարթնոց
Յողջոյն խառնին սուրբ Կուսին :

Գերակայից բարձրացեալ

Յեթերս 'ի վեր սերարփին ,
Բարեբանի օրհնութեամբ
Մաքուր Տաճար Անեղին :

Մաղթեմք 'ի ձօն օրհնութեան

Քեզ, Տիրուհւոդ մօր Բանին ,
Հայեաց 'ի մեզ 'ի բարձանց
Յայս մեր ժողով սուրբ Ուխտին :

Արք յերկրաբարշ աստ սահման
 Համատագնապղ ՚ի վշտին .
 Յերկնաշու քո պողստայն
 Մի ռոր մեր անդ գթեացին .

ԵՐԳ ՔՍԱՆԵԼԻՈՒԹԵՐՐՈՐԴ

Ի վիրայ վերին սրբոյ Համբարձման .

Ո լրանալ տանեակ քառից
 Աւուրց սրբոյ Յարութեան ,
 Եւ Տէրն ՚ի լեառն Զիվենեաց
 Առաքելովք սրբազնն .
 Ուր զառաջին եւ զվերջին
 Հրամայեաց իւր տայր պատուեր ,
 Թագաւորաց եւ աշխարհի
 Առներ զնոսա քաջալեր .

Միուլ հօգւով յասկիաձոյլ
 Ցօդէ յանլոյծ ՚ի շլժայ .
 Ի Սաղիմեան նատեալ գադար
 Յերկնից զՀօգին խաստանայ .
 Ամպախաղաց վերասլանայ

Ընդ օդ լժեթեւ լուսազգեաց ,
 Ուրով գրանդիք երկնից բացան
 Վերելս մարդկան տալ յԱստուած .
 Ուր զուարթնոց իջեալ յերկնից
 Առաքելոց տան խփախոյս .

Դոյն օրինակ իջանելոյն

Կանխաւ լինին քաջայոյս .

Հաւատացեալք անդ խաչակրօն

Լուսով փայլին վառ ՚ի վառ ,

Մեղսասիրաց անհաւատից

Լիցի դասիլ անաչառ .

Ամդ խոնարհեալ յայս սուրբ լերին

Աստուածորդւոյդ Համբարձման ,

Մաղթեմք յերկնից զամենազօր

Զշոգիդ սուրբ տալ մեղ օճան .

Յանկից վիրաց քոց հեգեցունց

Մեղ կեանք ծաւալ ցոլասցին ,

Ցաւերժմական լուսով փառաց

Ցաջեան քո կող ՚ի դասին .

ԵՐԳ ՔՍԱՆԵՒԻՆՆԵՐՐՈՐԴ

Ի վերայ Տնօրէնութեան Քրիստոսի .

Տէրըդ սիրով խոնարհեցար ,

Ցարդանդ կուսին բնակեցար ,

ԶԱԴամոյին մարմին զգեցար ,

Եւ աշխարհի լոյս ծագեցար ,

Ի յանարատ կուսէն ծնար ,

Ի խանձարուրս պատեցար ,

Ի յանբանից Մասւր եղար ,

Եւ ՚ի Մոդուցն պատուեցար .

Հառասնօրեայ բնծայեցար
 Ըստ օրինաց դու ՚ի Տաճար ,
 Փակեալ դրան բացող ցուցար ,
 ՚ի Ծերունւոյն անդ դգուեցար :
 ՚ի Յորդանան մկրտեցար ,
 ՅԱՄՈՒՆԱՅԻՆ Հօրեդ վկայեցար ,
 ՚ի Յովհաննէ քարոզեցար ,
 Գառն Աստուծոյ անուանեցար :
 ՚ի ՎԵՐՆԱՍՈՒՆՆ բազմեալ եղեր ,
 Զահեղ խորհուրդն աւանդեցեր ,
 Զաշակերտացդ զոտո լուացեր
 Խոնարհութեան վարս ուսուցեր :
 ՚ի Յուդայէ համբուրեցար ,
 ՚ի ծառայէ ապտակեցար ,
 ՚ի չար Հրեից նախատեցար ,
 Կամաւ ՚ի խաչ դու բարձրացար :
 Հնդ անօրէնս համարեցար ,
 Արբեր լեզի եւ դառնացար ,
 Ուր կենդանիդ անընչացար ,
 Սուր գեղարդեամբն խոցեցար :
 ՚ի ՅԷՎԱԵՎԻԱՅ դու պատեցար ,
 ՚ի գերեզման կոյս թազեցար ,
 Եւ մատսնեաւ անդ կնքեցար ,
 ՚ի զինուորաց պահպանեցար :
 ՚ի դժոխս իջեալ աւերեցեր ,
 Զադամ զՃնողն աղատեցեր ,
 Զարքայութեան դառան բացեր ,
 Եւ մեզ ձրի պարգեւեցեր .

Պ սուրբ շիրմէն փառօք յարեար .
Բաղմաց յայտնի երեւեցար
Ընդ աշակերտոն բաղմեցար ,
Յորժամ փակեալ դրօք ցուցար :

Ի Գալիլիա ապա գնացեր ,
Անդ զԱռաքեալսն օրհնեցեր ,
Ի հեթանոս առաքեցեր .
Եւ քարոզել պատուիրեցեր :
ՅԵՐՈՒՍԱՂԵՄ կալ առացեր ,
ԶԱՄՍՈՒԱԾ հոգին աւանդեցեր ,
Նովաւ լեզուս բաժանեցեր ,
Եւ սուրբ շնորհօք զարդարեցեր :

Ի ԶԻՄԵՆԵԱԳ լերին գտար ,
Յորմէ փառօք վեր համբարձար ,
Դասուց վերնոց ահեղ ցուցար ,
Եւ ընդ աջմէ Հօր բաղմեցար :

ԱՎ տէր Յիսուս Աստուած և բան ,
Կրեցեր կամաւ զայս ամենայն ,
Շնորհիւ քո սուրբ Տնօրէնութեան ,
Արժանացն քոյդ աեսութեան :

ԵՐԳ ԵՐԵՄՆԵՐՐՈՐԴ

Ի Անդ սրբոյ Յարութեան Քրիստոսի :

Գ Ահութիւն մէծ տեառն Արարչին
Եւ Քրիստոսի հանուրց Փրկչին ,
Որ ՚ի ձեռն իւրոյ խաչին
Յարոց ընդ իւր զմարդն առաջին :

Այսօր յարեաւ 'ի մեռելոց .

Լոյս ծագեցաւ արարածոց ,

Զհոդիս փրկեաց 'ի դժոխոց .

Աւետիս տամ ազգիս Հայոց .

Առասւօրեաց զոգիս մարդկան .

Սուրբ Յարութեամբըն պատուական ,

Զմարմինն ետ մեղ անապական ,

Եւ սուրբ զարիւն իւր փրկական :

Ուրախութեամբ ճաշակեսցուք ,

Եւ սրբութեամբ հաղորդեսցուք ,

Զի ՚ի մեղաց սրբեալ լիցուք ,

Յանմահութիւն փոխարկեսցուք :

Իիւսեալ 'ի մի փառատրեսցուք ,

Ըղյարուցեալըն գովիսցուք .

Զլոյս Գերեզմանն համբուրեսցուք ,

Եւ զՅարութիւնըն պատուեսցուք :

Ոուրբ Քաղաքըն Երուսալէմ ,

Ընդ որ և սուրբըն Բեթլէհէմ ,

Ոըք հաւատոյս մեր եղեն վէմ ,

Մարտկոց ամուր դիւաց ընդդէմ :


Տիրամօր սուրբ Աստուածածնին

Ուրախութիւն ետ իւր Որդին՝

Եւ որք սյաօր սգաւօրին ,

Սադայէլի գասուն կարդին :





ԵՐԳ ԵՐԵՍՆԵՒՄԻԵՐՐՈՐԴ

Ի վերայ սրբոյ կարապետին :

Կանանցածին չէ յարուցեալ

Մեծ քան զքեղ այր զօրացեալ
ի տեառնէ է այս ծանուցեալ,
Խնդրակատար սուրբ կարապետ :

Գայր կցարն առ մայր քո յղացեալ,

Դու յարգանդին զայն իմացեալ,
Երկիր պագեր անդ խաղացեալ,
Բանին սատար սուրբ կարապետ :

Զաքարիա հայրդ համբացեալ,

Ի քում ծննդեան բերան բացեալ,
Զանունդ Յովհաննէս կարդացեալ,
Շնորհապատար սուրբ կարապետ :

Պնդ մէջ կապեալ մաշկեայ գօտի
 թընակեցար յանապատի ,
 Եւ Հրեշտակաց գու հաւաստի՝
 Նմանեցար սուրբ կարապետ ,
 Առուսեակ ծագման արփւոյն ,
 Ընդունարան շնորհաց Հոգւոյն ,
 Որ Մկրտիչ Աստուածորդւոյն
 Ընտրեալ գտար սուրբ կարապետ ,
 Վեռամբդ առեալ ըզջուր գետոյն
 Լցեր վերայ օրհնեալ Գլխոյն ,
 Եւ ձայնի Հօր վկայելոյն
 Արժանացար սուրբ կարապետ ,
 Զայն բարբառոյ մականուանեալ ,
 Ճշմարտութեան միշտ հաւանեալ ,
 Զներովդէս յանդիմանեալ ,
 Գլխատեցար սուրբ կարապետ ,
 Եւ ՚ի դժոխոն քարողեցեր ,
 Տեառն ըզգալուստ աւետեցեր ,
 Որով զտրտմեալս բերկրեցուցեր ,
 Ուրախարար սուրբ կարապետ ,
 Կովելի ես գու զանազան ,
 Կենաց մերոց ես գաւազան ,
 Քրիստոնէից լե՛ր աւազան ,
 Ո՛վ սրբարար սուրբ կարապետ ,
 Առաքելոց , Մարգարէից ,
 Մարտիրոսաց , Քահանայից ,
 Ճդնաւորաց սրբոց հանրից
 Մեծ կոչեցար սուրբ կարապետ ,

Քո աղօթքն է ընդունարան ,
Բարեխօսեամ վասրն մարդկան ,
Որ անուանիս « Մշու Սուլթան » ,
Հոգեպարար սուրբ Կարապետ :



ԵՐԳ ԵՐԵՍՆԵՐԿՈՒԵՐՐՈՐԴ

Գովասանոթիւնն ՚ի վերայ բարեկամին Քրիստոսի
սրբոյն Պազարու :

Իսկզբանէ Բանն Աստուծոյ
